ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«04» ապրիլ 2019թ. N-- – Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 119-րդ կետում «Ավագանու նստաշրջանների ընթացքում, երկու ամսվա մեջ առնվազն մեկ նիստի ընթացքում» բառերը փոխարինել «Ավագանու յուրաքանչյուր հերթական նիստի վերջին» բառերով։
2) 120-րդ կետի 7-րդ ենթակետում «մեկ» բառը փոխարինել «երեք» բառով։
3) 120-րդ կետի 7-րդ ենթակետը «կապակցությամբ» բառից հետո լրացնել «կամ հանդես գալ հարցի վերաբերյալ հայտարարությամբ»

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի ավագանու գործող կանոնակարգով ավագանու նստաշրջանների ընթացքում, երկու ամսվա մեջ առնվազն մեկ անգամ պետք է տեղի ունենա Քաղաքապետի, Քաղաքապետի տեղակալների և Քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների հետ հարց ու պատասխան: Գործնականում դրանք տեղի են ունենում երկու ամիսը ուղիղ մեկ անգամ, ինչը նշանակում է, որ այդ հնարավորությունը ավագանու անդամներին մեկ տարում 4 անգամ է ընձեռնվում: Բացի այդ գործող կանոնակարգը չի նախատեսում նիստի ընթացքում բարձրաձայնել քաղաքային նշանակության խնդիրները ինչպես նաև տեսակետներ հայտնել դրանց վերաբերյալ օրակարգային հարցերի քննարկման ընթացքում, քանզի ելույթի բովանդակությունը կարող է չհամընկնել քննարկվող օրակարգային հարցին: Սույնով առաջարկվում է ավագանու յուրաքանչյուր նիստի վերջին ունենալ հարց ու պատասխանի հնարավորություն գործադիրի հետ, ինչպես նաև հայտարարությամբ հանդես գալու մինչև 3 րոպե տևողությամբ: Սա հնարավորություն կընձեռի ավագանու անդամներին ամիսը մեկ անգամ բանավոր հարցադրմամբ հանդես գալու, ինչպես նաև տեսակետ հայտնելու բարձրացրած հարցի առնչությամբ:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ	Դ. ԽԱԺԱԿՅԱՆ
«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ	Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ	Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երեվան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման դեպքում երևան քաղաքի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երեվան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽԱԺԱԿՅԱՆ

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ